ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 864

«10» Դեկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՀՈԱԿ) առկա են տնօրենների թափուր պաշտոններ, իսկ դրանց համալրումը անհրաժեշտ է ՀՈԱԿ-ների լիարժեք աշխատանքային գործունեության համար

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատի համայնքապետարանի մի շարք ՀՈԱԿ-ներ տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ՝ ըստ սույն որոշման հավելվածի:

2.Ապահովել անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, տարածքային կառավարման և ենթակատուցվածքների նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

3.Տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացման անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղարին:

4.Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
<<10>> մայիս 2023թ.
թիվ 864 որոշմամբ

ՑԱՆԿ
Վաղարշապատի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնօրենների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների

հ/հ	ՀՈԱԿ-ի անվանում	Մրցույթի անցկացման օրը և ժամը
1.	«Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց»	13 հունիսի 11:00
2.	«Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան»	13 հունիսի 14:00
3.	Թիվ 10 «Շուշան» մանկապարտեզ	13 հունիսի 16:00
4.	«Մանկապատանեկան մարզադպրոց»	14 հունիսի 11:00
5.	«Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց»	14 հունիսի 14:00

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ